# ՃԱՌ

Մերձնայեալ յայսմ ականապարար ուրախութեան ազգային հանդիսի՝ բարեպատեհ է ինձ արդարև յուշածել զանձառահրաշ տեսիլն սրբակրօն մարգարէին Եզեկիէլի. որ յորժամ ՚ի ծուփս հոգւո թշուառութեան հայրենեաց վարանեալ զկայ առնայր առ Քոբար գետով՝ գետակըն ՚ի վեր ամբարձեալ յերկինս տեսանէր զհրեղէն կառս, յորում լծեալ էին քառակերպեան լուսափայլ կենդանիք, յորս չիշխէր ոք հայել. և յեղակարծում ժամու կարկառեալ ՚ի նա ձեռն ինչ՝ ետ նմա զմատեան ինն ՚ի կերակուր. որոյ ՚ի ներքուստ և յարտաքուստ գրեալ էր ողբ և վայ և ընդ ճաշակելն նորա վայն իսկ և իսկ քաղցրացեալ անուշացաւ բերան նորա. որով սկիզբն եառ յայնմհետէ մարգարէանալ յաջողի անդ իբրում: Մհաւասիկ զնմանութիւն տեսլեանս ակներև տեսանեմ ՚ի Հայկազն Հայրենակիցս իմ. վասն զի փայլուն պայծառապէս, ոչ չորեքկերպեան անբան կենդանեօք, այլ բազմակ հնաշխարհիկ օգտակէտ առաքինութեամբ, իմն ազգասիրութեամբ, ուսումնասիրութեամբ, աշխատասիրութեամբ և առատաձեռնութբ. յորոց վերայ հանգչելով փառօք իշխանութիւնք եկեղեցական՝ երևեցաւ թշուառորդւոյս Մոսքուաղեան առ ՚ի մի օժանդակ հանդիսանալով մեզ, մատակարարեաց հաւկ ուրեմն ՚ի ձեռն հոգացողութեան հոգաբարձուաց մերոց զայնպիսի մատեան ինն ուսման և գիտութեան. յորում թէպէտ և գրեալ էր ողբ և վայ, այս է ՚ի սկզբան տաժանակիր աշխատութիւն, նակայն ընդ ուտելն առժամայն անուշացաւ, քաղցրացաւ բերան մեր. որով սկսաք փոքր ՚ի շատէ թոթովախօսել զբաղմադարեան կորուսեալ մայրենի լեզուն մեր. Այո՛, գովելի են չքնաղ առաքինութիւնք ձեր ով ազնուամեծար հայրենակիցք իմ, վասն զի այնոքիմբք շնորհէ հոգևոր իշխանութիւնն զյոլով բարիս մեզ և յետագայ ուսումնակարօտ մանկանց Ձերոց. գովելի է ազգասիրութիւն Ձեր աջակցեալ ընդ առատաձեռնութեան, զի ոչ խնայելով առ սէր ազգի և հայրենեաց զծախութիւնս և զինչս. Ձեր, ամենայնիւ յամենայնի զուն գործէք յաղագս լուսաւորութեան թշուառ զաւակաց ձերոց.

Գովեստից արժանի է ուսումնասիրութիւն ձեր, քանզի այժմ զարթուցեալ ՚ի քնոյ անհոգութեան՝ ջանայք զմայրենի լեզուն ձեր ուսուցանել որդւոց ձերոց. նաև յայտնի տարացոյց ուսումնասիրութեան ձերոյ տեսանի այժմ իսկ, այնու զի զանց արարեալ զանձնական գործով ձերով՝ ուրախութ դիմօք ժողովեալ էք յատենիս հարցաքննութեան ՚ի տես յառաջադիմութեան որդւոց ձերոց. չ՚կարեմ մոռանալ նաև զաշխատասիրութիւն ձեր ՚ի գիւտ նորանոր միջոցաց ՚ի բարւոքել զկրթական դպրոցիս և աշակերտելոցն ՚ի սմին. բայց հայրենասէր Տեարք իմ՝ համարիք թէ ՚ի նանիր ելին վերստղեալ աննման երախտիքն և ջանացողութիւնքն ձեր զորս ունիք ՚ի վերայ լուսակարօտ դպրոցական մանկանցս, ոչ ոչ. ում կայք ՚ի վայելել զպտուղս ուսմանս նոցա, ահա

ւորիկ անսէք կարգաւորեալ են առաջի ձեր իբրև պտղալից ծառատունկք հասունացեալ քաղցրակուր պտղովք. քաջջան տքնութեամբ անխոնջ պարտիզպանին դարմանեալք, յորոց հատուցանելոց են ձեզ զարդիս զանկաւածոնեայն և առյապա կիւրում ժամանակի զբաղմոքեղունն զատասն մի վհատիք, ջնջայինք թէ ուսմամբ և եթ կարէ իւրաքանչիւր ոք հասու լինել պատշաճական պատուաւորութեան առ Աստուած և առ ընկեր, առ Ազգ և առ հայրենակիցս իւր. ուսմամբ միայն կարէ մխիթարել զխեղճացեալ սիրտ հայրենեաց իւրոց։ Այսո՛ք են առ ուսակի պտուղ միայն ազգասիրական և ուսումնասիրական ջանից ձերոց մեծարունեալք. առանց գործակցութեան ձերոց իշխանութիւնն եկեղեցական չէ որէ ՚ի գլուխ հանել զձեռնարկութիւն իւր։ Վասնորոյ մատուցանեմք արդէն խնամակալին դպրոցիս բարձր սրբազան առաջնորդին թեմիս Ոսկար արք եպիսկոպոսի, ձեզ և բարեջան հոգաբարձուաց մերոց ՚ի բոլոր սրտէ զլիակատար գոհունակութիւն մեր. երախտապարտ եմք յաւիտեան անքաւ երախտեաց ձերոց, անջնծանելի դրոշմեալ է չքնաղ առաքինութիւնք ձեր հանդերձ երախտագիտութեամբ ՚ի տախտակ սրտից մերոց. կեցջի՛ք դո՛ւք ՚ի փառս և պարծանս մեր, զի ուսանելով խնամովք ձերովք զինչ իցէ լեզուն մեր լիցուք պիտանի զաւակք ազգի մերոյ և արժանաւոր որդիք արժանաւոր ծնողաց։

Քարտուղար հոգևոր կառավարութեան
Հայոց դպրոցս Դիլիր Լևոն Մնձակեան։

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ՀԱՅՈՑ ՄԱՅՐԵՐՈՒՆ ՄԱՆԿԱՆՑ ԲԱՐՈՅԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆԸ ՀԱՄԱՐ ՄԷԿ ԽՈՐՀՈՒՐԴ։

Երբ շինութեան մը ձեռք կ՚զարնեմք, նախ և առաջ մեծ ուշադրութեամբ ու խնամքով կ՚ջանամք որ հիմը հաստատուն ըլլի. իսկ տղայոց ծաղիկ հասակը շատ անգամ ծնողաց թուլութեանն ու անհոգութեանը զոհ կ՚ըլլի. վասն զի անմտաբար կ՚կարծեն թէ տղայի մը պակասութիւնները ուղղելու համար անպատճառ պէտք է սպասել որ խելահաս ըլլի։ Այնպիսի մայրեր կ՚մոռանան թէ կրից ծնունդը արդէն իսկ կ՚գուշակէ տղայոց խելքին ամփոփումը, և կ՚թողուն անխոհեմութեամբ որ այն կրքերը սեպհական դառնան նոցա յապագային։ Ո՛վ չէ տեսած այնպիսի ծնողքներ, որ տղայոց բարի կամ չար պահանջմունքները ըստ հաճոյից իւրեանց կ՚կատարեն։ Ուրախութեան ատեն տղայոց ամեն տեսակ պահանջմունքները անխտիր կ՚կատարեն, իսկ երբ բարկացած են չնչին բանի մը վերայ, ոչ միայն նոցա կամքը չեն կատարեր, այլ նաև օգտակար բաները չեն յօժարիր տալ իրենց զաւակացը. Բայց գիտէք այն ատեն տղայք ի՞նչ կ՚ընեն. իւրեանց պահանջմունքին արդար եղածը իմանալով կ՚աշխատին խորամանկութեամբ ծնողական սէրը իրենց գրաւել, որպէս զի յօժարին նոցա փափագը կատարել. ուստի և կամաց կամաց ծնողք տղայոց վերայ ունեցած համարումը կ՚կորսնցը-